

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՌԶԱԿՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ 26.04.2021



Միրելի՛ հայրենակիցներ

Հարյուր տարի առաջ՝ 1921 թվականի ապրիլի 26-ին, Տաթևի համազանգեզուրյան 2-րդ համագումարը «Ինքնավար լեռնաշխարհ Սյունիքը» հայտարարեց անկախ պետություն եւ այն վերանվանվեց Լեռնահայաստան, որի կազմում ընդգրկվեցին Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազը) եւ Լեռնային Ղարաբաղը:

Լեռնահայաստանի հռչակումը Սյունիքի հինգհազարամյա պատմության ամենահիշարժան դրվագներից է:

Լեռնահայաստանի հռչակումը պատմական տվյալ իրավիճակում Սյունիքը փրկելու հերոսական ու ողջամիտ, բացառիկ քայլ էր: Դրանով, փաստորեն, կանխվեց Սյունիք-Զանգեզուրը զավթելու թուրք-ադրբեջանական ծրագիրը: Դրանով կանխորոշվեց Սյունյաց աշխարհի հետագա հուսալի ընթացքը:

Փառապանծ այդ իրադարձության 100-ամյակի կապակցությամբ շնորհավորանքս եմ ուղղում իմ հայրենակիցներին՝ բոլոր սյունեցիներին եւ յուրաքանչյուրին մաղթում հաջողություններ, մեր նախնյաց նշխարներով սրբացած այս հող ու ջրին տեր կանգնելու վճռականություն, մեր քաջարի նախնիների ու ազգային-քրիստոնեական ավանդույթներին հավատարիմ մնալու հաստատակամություն:

Նշանավոր այս օրը հանուր Սյունիքի անունից խոնարհվում եմ Լեռնահայաստանի վարչապետ ու Սպարապետ, Սյունիք-Զանգեզուրի ազատարար Գարեգին Նժդեհի առասպելական կերպարի եւ հավերժ կենդանի հիշատակի առջեւ:

Խոնարհվում եմ բոլոր այն զորավարների, զինվորների հիշատակի առջեւ, ովքեր մեր պատմության վճռորոշ այդ պահին, Գարեգին Նժդեհի առաջնորդությամբ, տեր կանգնեցին Սյունյաց աշխարհին՝ չխնայելով իրենց կյանքը:

Օգտվելով առիթից՝ երախտագիտությունս եմ հայտնում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտին եւ Հայաստանի ազգային արխիվին՝ Լեռնահայաստանի 100-ամյակի կապակցությամբ Գործիսում եւ

Տաթևի վանական համալիրում հանրապետական գիտաժողով կազմակերպելու համար:

Կարելոր էմ համարում նշել, որ Լեոնահայաստանի ստեղծումը, Գարեգին Նժդեհի եւ Սյունյաց աշխարհի մեծահամբավ գորավարների օրինակը տասնամյակներ շարունակ եղել է մնում են հայրենապաշտության անսպառ աղբյուր սյունեցիներիս համար:

Գարեգին Նժդեհի, ինչպես էւ Դավիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի, Սյունյաց աշխարհի հայկազուն նախարարների ու գորավարների օրինակները հիշում ու դրանցով գոտեպնդվում էինք, երբ մեկնում էինք պաշտպանելու Հայոց Արցախը ե՛ւ առաջին պատերազմում, ե՛ւ Ապրիլյան պատերազմում, ե՛ւ 2020 թ. 44-օրյա գոյակովում:

Լեոնահայաստանի 100-ամյակը նշում ենք Սյունիքի համար ճակատագրական մի նոր ժամանակաշրջանում:

Ներկայումս նույնպես, ինչպես մեկ դար առաջ, թուրք-ազերիները չեն թաքցնում իրենց ձգտումները սրբազան մեր երկրամասի՝ Սյունիքի հանդեպ:

Եվ հիշարժան այս օրը բոլոր սյունեցիների անունից հայտարարում էմ՝ Սյունիքն անդամահատելու, Սյունիքն իր պատմական դերից ու առաքելությունից զրկելու, նաեւ խոցելի դարձնելու բոլոր փորձերը դատապարտված են ձախողման:

Սյունեցին դարեր շարունակ տեր է եղել իր երկրամասին, այդպես լինելու է նաեւ հետայսու, ինչպիսի փորձություններ էլ պարտադրվեն մեզ:

Սյունիքը հայոց ուժեղ էւ ժամանակակից ազգային բանակ ունենալու ջատագովն է, առանց որի չի կարող լինել ոչ միայն Սյունիքի, այլեւ Հայաստանի Հանրապետության արժանապատիվ պաշտպանվածություն:

Հատկապես մեր ընթացքի այս փուլում՝ ամենատարբեր պատրվակներով Սյունիքի հանրությունը պառակտելու բոլոր փորձերը մերժելի են էւ չպետք է տեղ գտնեն մեզանում:

Սյունիքը սովորական տարածք չէ, այլ հայոց պետության ողնաշարն է, ինչը պարտավոր ենք պահպանել ու պաշտպանել աչքի լույսի պես:

Եվ, ի վերջո, մենք տերն ենք մեր նախնիների թողած պատմական ժառանգության ու հայոց պատմական հիշողության:

Լեոնահայաստանի պատմական դասերով ու ոգով էլ դաստիարակել էւ դաստիարակելու ենք մեր երեխաներին ու թոռներին:

Այդ համոզմունքով էլ շարունակելու ենք հավերժին միտված սյունիքյան երթը:

Եվ այդ ամենով հավատարիմ ենք մնալու ոչ միայն Սպարապետ Գարեգին Նժդեհի ու Լեոնահայաստանի դասերին, այլեւ սյունեցի 218 նահատակի սուրբ հիշատակին,

որոնք Արցախյան նորոյա պատերազմում զոհվեցին հանուն հայոց
արժանապատվոյան: